**Տ ե ղ ե կ ա ն ք**
**ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին**

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 23. | **Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում** | - **սերմնաբուծության և սերմնապահովության ծրագրերին ուղղված միջոցառումների իրականացում,** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)*** Պարենային ապահովության մակարդակի բարձրացման, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման նպատակով ՀՀ մարզերի հողօգտագործողների վճարունակ պահանջարկի հիման վրա ՀՀ կառավարության որոշմամբ (22.02.2018թ. N 7) հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսված է մրցակցային հիմունքներով ձեռք բերել մինչև 150 տոննա առաջին վերարտադրության գարնանացան ցորենի, մինչև 10 տոննա ոլոռի, մինչև 7.5 տոննա սիսեռի, մինչև 1664 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու, մինչև 20 տոննա եգիպտացորենի, մինչև 50 տոննա առվույտի և մինչև 240 |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | տոննա կորնգանի սերմացուներ և սուբսիդավորված գներով հատկացնել ՀՀ հողօգտագործողներին:<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպված մրցույթի արդյունքում ցածր գին առաջարկած «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից նախատեսվում է գնել մինչև 164 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու սերմացու, «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ից՝ մինչև 937.5 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու, առաջին վերարտադրության գարնանացան ցորենի, եգիպտացորենի, ոլոռի, սիսեռի, առվույտի և կորնգանի սերմացու, «Սեմենա Ստավրապոլիա» ՍՊԸ-ից՝ մինչև 1040 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու սերմացու:<br>Նշված ընկերություններից գնված սերմացուի մեկ կիլոգրամը հողօգտագործողներին հատկացվում է պետության կողմից ձեռք բերված արժեքից ավելի ցածր գներով՝ գարնանացան ցորենը՝ 150, ոլոռը՝ 300, սիսեռը՝ 500, գարնանացան գարին՝ 130, եգիպտացորենը՝ 350, առվույտը՝ 1500, կորնգանը՝ 370 դրամ արժեքով:<br>2018 թվականի ապրիլի 3-ի դրությամբ ՌԴ «Սեմենա Ստավրոպոլիա» կազմակերպության կողմից հանրապե- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | տություն է ներկրվել 302.7 տոննա գարնանացան գարու «Ռատնիկ» և «Մամլյուկ» սորտերի սերմացու:<br>Հանրապետության գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում սերմնաբուծության արդյունավետ համակարգի ստեղծման նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրային որոշմամբ հաստատվել է 2018 թվականի համար Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացման ծրագիրը, որի նպատակն է հանրապետության տարածքում զարգացնել աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի և սիսեռի սերմնաբուծությունն ու սերմարտադրությունը, որը հնարավորություն կընձեռի գիտական կենտրոնների, մասնավորապես Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ի և «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ու սերմ արտադրող ֆերմերային տնտեսությունների միջոցով ավելացնել հանրապետության տարածքում արտադրված, բարձր որակ ապահովող սերմնանյութի արտադրության ծավալները:<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ձեռքբերված սերմնանյութը գիտական կենտրոններին ու թվով 15 ֆերմերային տնտեսություններին, պայմանագրային հիմունքներով, պետք է տրամադրվի 1:2 փոխա- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | րաբերությամբ սերմնանյութի կամ դրան համապատասխան դրամական արժեքի վերադարձնելու պայմանով: Ծրագրի շրջանակներում 1 կգ սերմնանյութի ձեռքբերման համար նախատեսվել են հետևյալ գները՝ աշնանացան ցորեն (տեղական)՝ 180, (արտերկրից ներկրվող)՝ 300, հնդկացորեն՝ 1050, ոլոռ՝ 670, ոսպ՝ 1250 և սիսեռ՝ 1200 դրամ՝ ներառյալ տեղափոխման հետ կապված ծախսերը:<br>2018 թվականի ապրիլի 3-ի դրությամբ ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերի համայնքներին բաշխվել է 36.1 տոննա գարնանացան ցորենի, 0.6 տոննա սիսեռի, 1053.8 տոննա գարնանացան գարու, 0.65 տոննա եգիպտացորենի, 10.6 տոննա առվույտի և 174.1 տոննա կորնգանի սերմեր:<br>- **սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի իրականացման ապահովում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. սեպտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 3-ի դրությամբ ստուգվել է գարնանացան մշակաբույսերի շուրջ 184.9 տոննա սերմ, որից՝ հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսերի՝ 144.8 տոննա, բանջարբոստանային մշակաբույսերի՝ 0.04 տոննա, արմատապտուղների և պալարապտուղների՝ 21.1 տոննա, կերային մշակաբույսերի՝ 18.9 տոննա և այլ մշակա- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | բույսերի 0.1 տոննա սերմ:<br>Աշխատանքներ են տարվել բույսերի 2 նոր սորտերի սորտափորձարկման ուղղությամբ:<br>Աշխատանքները շարունակվում են:<br>- **բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մարզային ագրոնոմների կողմից իրականացվել է բուսասանիտարական մոնիթորինգ 46000 հեկտար տարածության վրա, որից մկնանման կրծողներ՝ 41350 հեկտար, պտղատու ծառերի հիվանդություններ և վնասատուներ՝ 4650 հեկտար:<br>«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում հիմք ընդունելով «Անասնաբուժասա-նիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2018 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած մոնիթորինգի արդյունքները՝ 18024 հա տարածության վրա մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանք-ներ կազմակերպելու համար ՀՀ մարզերին տրամադրվել է 1441.92 կգ «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանու-թյան միջոց, որից՝<br>Արագածոտն 4730 հա-ին 378.4 կգ,<br>Արարատ՝ 3178 հա-ին 254 կգ, |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | Արմավիր 2465 հա-ին 197.2 կգ,<br>Լոռի՝ 3739 հա-ին 299.12 կգ,<br>Կոտայք՝ 1250 հա-ին 100 կգ,<br>Սյունիք՝ 560 հա-ին 44.8 կգ,<br>Վայոց Ձոր՝ 250 հա-ին 20 կգ,<br>Տավուշ՝ 1855 հա-ին 148.4 կգ:<br>- **պետական աջակցության ծրագրի շրջանակում 200 հա ինտենսիվ պտղատու այգիների հիմնում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. նոյեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» պիլոտային ծրագրին հավանություն տալու մասին» N 53 արձանագրային որոշումը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) և հետևյալ բանկերի և ֆինանսական կառույցների հետ ստորագրվել են համագործակցության հուշագրեր. «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արմսվիսբանկ» ՓԲԸ, «Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Արդշին- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | բանկ» ՓԲԸ, «Հայաստանի զարգացման և ներդրումներրի կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ, «ՖԱՐՄ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ:<br>Նախարարության կայքում տեղադրվել է կապալառու ընկերությունների ցանկը, որը պարբերաբար թարմացվում է:<br>Կապալառուների ցանկը էլ. փոստով տրամադրվել է վերընշված հուշագիր ստորագրած կազմակերպություններին:<br>ԳՖԿ-ի և հուշագիր ստորագրած բանկերի «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արմսվիսբանկ» ՓԲԸ, «Կոնվերսբանկ» ՓԲԸ, «ՖԱՐՄ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ) միջև ստորագրվել են պայմանագրեր՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ:<br>- **«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի իրականացման միջոցով կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովում, շուրջ 10.7 մլն կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում համայնքը սպասարկող անասնաբույժ մասնագետների հետ կնքվել է 554 անասնաբուժական ծառայությունների վճարովի մատուցման |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | պայմանագիր: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ձեռք են բերվել հետևյալ պատվաստանյութերը և ախտորոշիչ. հակադաբաղային՝ 1200000 դոզա, հակասիբիրախտային՝ 1203000 դոզա, տուբերկուլյոզի ալերգիկ ախտորոշիչ՝ տուբերկուլին 18600 դոզա: 1-ին եռամսյակում համայնքային անասնաբույժ-մասնագետների կողմից իրականացվել են խոշոր (այսուհետ խ.ե.կ.) և մանր (այսուհետ՝ մ.ե.կ.) եղջերավոր կենդանիների բրուցելյոզ, սիբիրախտ, դաբաղ և տուբերկուլյոզ հիվանդությունների նկատմամբ 650800 գլուխ: Անասնահակահամաճարակային միջոցառում՝ այդ թվում՝ խ.ե.կ. բրուցելյոզ՝ 139673, սիբիրախտ՝ 21330, դաբաղ՝ 440166 տուբերկուլյոզ՝ 9222: Մ.ե.կ. բրուցելյոզ՝ 10098, դաբաղ՝ 32342, Ձիերի սիբիրախտ՝ 543: -**կոոպերատիվների աջակցության պետական ծրագրի իրականացում** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)*** Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 363–Ն որոշման հավելվածի 2-րդ կետը, և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունվարի 24-ի |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | N 02/23.14/929-18 հանձնարարականը, մշակվել և 2018 թվականի մարտի 21-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիրը հաստատելու մասին» N 66-Ն հրամանը, որը, սահմանված կարգով, ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:<br>ՀՀ արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N 02/14/52172-18 գրությամբ հրամանի գրանցումը մերժվել է, նշելով, որ «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:<br>**- գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը, որը իրականացվում է նոր մեխանիզմներով և պայ- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | մաններով սկսած 2017 թվականի 4-րդ եռամսյակից:<br>Եռակողմ հուշագրեր են ստորագրվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) և մի շարք ֆինանսական կազմակերպությունների՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի, «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի, «ՖԱՐՄ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ի, Հայաստանի զարգացման և ներդրումներրի կորպորացիայի, «Կամարջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ի միջև:<br>Վարկերը տրամադրվում են 3-10 մլն դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով՝ ելնելով ներդրումների ուղղվածությունից: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը իրականացվում է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3 %, իսկ մնացած համայնքների համար 5 % տոկոսադրույքով:<br>Վարկի տրամադրման նախապայման է համարվում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը:<br>Օպերատիվ տվյալներով 2018 թվականի 1-ին |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | եռամսյակում տրամադրվել է 1124 միավոր վարկ 4.8 մլրդ դրամ գումարով: Մեկ վարկի միջին չափը կազմել է 4.3 մլն դրամ: Ծրագիրը շարունակվում է:<br>- **հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի» շրջանակներում աշխատանքները սկսվելու են ապրիլ ամսից:<br>- **արտահանմանը միտված ժամանակակից ձկնաբուծարանների ձևավորման և կայացման պետական աջակցությամբ մեխանիզմների ներդրմամբ ռազմավարության նախագծի մշակման նպատակով ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>Ծրագիրը գտնվում է մշակման փուլում, կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ:<br>- **գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պայմանների ստեղծում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)*** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պայմանների ստեղծման նպատակով քայլեր են իրականացվել ապահովագրող խորհրդատուների խմբին (այսուհետ՝ Խումբ) փորձնական ծրագրի իրականացման շրջանում հնարավորինս աջակցություն ցուցաբերելու համար: Մասնավորապես՝<br>• փորձագետի ուղեկցությամբ հանդիպումների կազմակերպում բոլոր շահագրգիռ մարմինների հետ (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ (CARD), Ագրոբիզնեսի հետազոտության և կրթության միջազգային կենտրոն (ICARE), բանկեր և ապահովագրող կազմակերպություններ),<br>• անհրաժեշտ և հասանելի տեղեկատվության մշակում և ստորև նշված զեկույցների տրամադրում Խմբին՝<br>- փորձնական շրջանում որպես առաջնահերթ դիտարկվող մշակաբույսերի և ռիսկերի վերաբերյալ զեկույց, որը կազմվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի, բուսաբուծության և բույսերի պաշտպանության, հողերի օգտագործման և մելիորացիայի վարչությունների, «Բանջարաբոստանային և տեխնիկական |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | մշակաբույսերի գիտական կենտրոն» և «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ների մասնագետների հետ քննարկումների արդյունքում,<br>- ՀՀ կառավարության կողմից բնական աղետների արդյունքում տուժած համայնքների բնակիչների կորուստները մեղմելու նպատակով տրամադրված աջակցության (դրամական և այլ) վերաբերյալ զեկույց,<br>• ՀՀ կենտրոնական բանկի և Գերմանական KFW բանկի հետ համագործակցության իրականացում՝ Խմբի կողմից ապահովագրության փորձնական ծրագրի սեղմ ժամկետները չխախտելու նպատակով,<br>• առաջիկայում նախատեսվող գործնական սեմինար-քննարկման կազմակերպման նախապատրաստական աշխատանքների իրականացում,<br>• խմբի կողմից մի շարք բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային փաթեթների, ինչպես նաև սպասվող գյուղապահովագրության հետ հնարավոր համագործակցության ու փոխկապակցվածության ուսումնասիրություն,<br>• տեղի մասնագետներից կազմված աշխատանքային խմբի ստեղծում՝ տարվող աշխատանքների օպերատիվությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:<br>- **«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» շրջանակներում հիմնադրված «Արոտօգտագործողների** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | **միավորում» սպառողական կոոպերատիվներին աջակցություն՝ գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների տրամադրում, կոոպերատիվների անդամ տնտեսություններում և ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ու տեղական արտադրողների ու վերամշակողների արտադրական հզորությունների ավելացում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները՝<br>• 7 համայնքում իրականացվում են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (20 կմ ջրագիծ, 20 հատ խմոց, 4 փարախ),<br>• 3 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում է մրցույթային փուլում (5 կմ ջրագիծ, 6 հատ խմոց, 2 փարախ),<br>• 12 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 23 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 7 անիվավոր տրակտոր, 16 միավոր այլ գյուղգործիք: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 24. | **Գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելի գնե-** | – **գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ շուրջ 3,0 հազ. տոննա ֆոսֆորական և** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | **րով մատակարարում** | **կալիումական պարարտանյութերի մատակարարման ծրագրերի իրականացում,**<br>**(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)**<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի փետրվարի 8-ի «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման գործընթացը կանոնակարգելու մասին» N 38-Ա հրամանով հաստատված ծրագրին համապատասխան նախատեսված է 285 մլն դրամ տրամադրել «Տորգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին 1500 տոննա ֆոսֆորական (50 կգ՝ 1 պարկի սուբսիդիան կազմում է 6000 դրամ) և 1500 տոննա կալիումական (50 կգ՝ 1 պարկի սուբսիդիան կազմում է 3500 դրամ) պարարտանյութերի ձեռքբերման և ՀՀ հողօգտագործողներին և Արցախի Հանրապետությանը մատակարարումները կազմակերպելու համար, իսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին՝ 18.7 մլն դրամ՝ ՀՀ մարզպետարաններում ներմուծված պարարտանյութերի բեռնման և համայնքներ բեռնափոխադրման աշխատանքները կազմակերպելու նպատակով: Հողօգտագործողներին ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի 1 պարկը (50 կգ քաշով) վաճառվելու է 7000 դրամ արժեքով: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 25. | **Անասնապահության ճյուղի կայունացմանն ուղղված միջոցառումների իրականացում** | – **տավարաբուծական գյուղացիական տնտեսություններին տեղական վերարտադրության տոհմային** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | **երինջների տրամադրման ծրագրի իրականացում,** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)*** Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել է տավարաբուծության զարգացման նոր ծրագիրը, որում ներառվել են նաև գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման համալիր միջոցառումներ: Ծրագիրը շահագրգիռ մարմիններ ներկայացնելուց և ստացված կարծիքների հիման վրա լրամշակելուց հետո, կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարություն: 2018 թվականի մարտի 27-ին վերոնշյալ ծրագիրը քննարկվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ: – **մասնավորի հետ համագործակցությամբ տոհմաբուծարանների ստեղծում, մինչև տարվա վերջ մեկ տավարաբուծարանի ստեղծում,** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)*** Ներկայումս մասնավոր անասնաբուծական տնտեսությունների հետ աշխատանքներ են տարվում տոհմաբուծարանների ստեղծման ուղղությամբ: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 26. | **Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում** | – **գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակում մինչև 2.8 մլրդ դրամ արժեքով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարում,** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի N 11 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը»:<br>Ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի ապրիլ ամսից: Ստորագրվել է հուշագիր ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) և ծրագրի մասնակից ֆինանսական կառույցների միջև. «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա», «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ, «ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ:<br>Ծրագրի մասնակից գյուղատնտեսական տեխնիկայի մատակարար կազմակերպություններն են. «Սպեցմաշ» ՍՊԸ, «Հրաշք Այգի» ՍՊԸ, «Մոտոբլոկ» ՍՊԸ, «Գալոպեր» ՍՊԸ, «ՔԱՐԴ Ագրո Սերվիս» ՓԲԸ:<br>Օպերատիվ տվյալներով 2018 թվականի 1-ին եռամսյակում գյուղատնտեսական տեխնիկա է տրամադրվել թվով 25 լիզինգառուի (շահառուի), որոնց տրամադրվել է 43 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում 21 միավոր տրակտոր և 22 միավոր |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | այլ գյուղտեխնիկա: Լիզինգի գումարը կազմել է 113.7 մլն դրամ:<br>– **գյուղատնտեսական տեխնիկայի կայանների հիմնման պիլոտային ծրագրի շարունակում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնման ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 342-Ն որոշմամբ: Ծրագրի ներդրման գումարը կազմում է 700 մլն դրամ: Ծրագիրը պիլոտային է, և նախատեսվում է նման կայաններ ստեղծել բոլոր մարզերում: Ծրագրի շրջանակներում նախատեսված ներդրման արդյունքում ակնկալվում է մշակել շուրջ 16 հազ. հա հողատարածք, որը կհան-դիսանա լրացուցիչ եկամտի աղբյուր և կնպաստի գյուղացիական տնտեսությունների կենսապայմանների բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը:<br>2018 թվականին հայտարարվել է կայանի կազմա-կերպման համար անհրաժեշտ տրակտորների ձեռքբերման նոր մրցույթ: 2017 թվականին հայտա-րարված մրցույթի արդյունքում պայմանագիր չի կնքվել: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 27. | **Գյուղատնտեսության ոլորտում ժամա-նակակից տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում** | – **կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման ծրագրի իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | նիստում N 53 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին մասնակից՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ու ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) հետ հուշագրեր ստորագրած ֆինանսական կառույցների և Ծրագրի դրույթներին համապատասխանող հայտեր ներկայացրած կապալառուների ցանկը տեղադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքում և պարբերաբար թարմացվում է:<br>2018 թվականի հունվար-մարտ ամիսներին հուշագիր է կնքվել թվով 8 ֆինանսական կառույցի հետ, որոնց և ԳՖԿ-ի միջև կնքվել են համագործակցության պայմանագրեր, ինչպես նաև հայտ է ներկայացրել 19 կազմակերպություն:<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի մարտի 5-ի N ԻԱ/ՌՆ-2/1945-18 գրությամբ Ծրագրին մասնակից ֆինանսական կառույցներին առաջարկվել է հնարավոր սեղմ ժամկետում ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել Ծրագրի պահանջներին համապատասխանող՝ կնքվելիք պայմանագրի օրինակելի ձևը: |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | Հաշվի առնելով, որ ֆինանսական կառույցների և կապալառուների միջև դեռևս պայմանագրեր չեն կնքվել, վարկերի տրամադրման գործընթացը չի սկսվել:<br>Հարկ է նշել նաև, որ հանրապետությունում կաթիլային ոռոգման համակարգերի շահառու հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց առցանց (online) ռեգիստրի ստեղծման նպատակով հանդիպում է տեղի ունեցել Instigate Mobile CJSC ընկերության համահիմնադրի հետ: Քննարկվել են ռեգիստրի ներդրման հետ կապված առաջարկությունները ու խնդիրները և նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել մինչև 2018 թվականի մայիս ամիսը ստեղծել առցանց ռեգիստրի համակարգ:<br>- **հակակարկտային ցանցերի ներդրման պետական աջակցության ծրագրի իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին հավանություն տալու մասին» N 37 արձանագրային որոշումը 2018 թվականի փետրվարի 26-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարության |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) և հետևյալ բանկերի և ֆինանսական կառույցների հետ ստորագրվել են համագործակցության հուշագրեր. «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արմավիաբանկ» ՓԲԸ, «Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ, Հայաստանի զարգացման և ներդրումներրի կորպորացիա, «ՖԱՐՄ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ:<br>Նախարարության կայքում տեղադրվել է կապալառու ընկերությունների ցանկը, որը պարբերաբար թարմացվում է:<br>ԳՖԿ-ի և հուշագիր ստորագրած բանկերի «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արմավիաբանկ» ՓԲԸ, «Կոնվերսբանկ» ՓԲԸ, «ՖԱՐՄ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ) միջև ստորագրվել են պայմանագրեր՝ հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ:<br>- **աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգի ներդրման 2-րդ փուլի աշխատանքների իրականացում հանրապետության 9 մարզերում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>Ծրագրի իրականացման առաջին փուլը փաստացի |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | սկսվել է 2018 թվականին, քանի որ «Գյուղատնտեսության քաղաքականության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացման ծրագրում» դոնոր կազմակերպության առաջարկով կատարվել են փոփոխություններ:<br>Մշակվել է խաղողի այգիների քարտեզագրման համար անհրաժեշտ մրցույթի տեխնիկական առաջադրանքը:<br>Աշխատանքները շարունակվում են: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 28. | **Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ճյուղի աջակցություն և ագրոպարենային արտադրանքի իրացման գործընթացի բարելավում** | – **գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>2018 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, որի վարկային պորտֆելը կազմում է շուրջ 18.0 մլրդ դրամ, իսկ յուրաքանչյուր վարկառուին տրամադրվող վարկի առավելագույն չափը՝ մինչև 1.0 մլրդ դրամ, սուբսիդավորման նպատակով նախատեսված գումարը՝ 998.9 մլն դրամ: |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | 2018 թվականի մարտի 30-ի դրությամբ ծրագրից օգտվելու նպատակով 5 ընկերություն նախնական հայտ են ներկայացրել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ընդհանուր 2046,5 մլն դրամի չափով:<br>2018 թվականի մարտի 30-ի դրությամբ առևտրային բանկերի կողմից հաստատվել են երեք հայտեր՝ 539 մլն դրամի չափով, իսկ մյուսները գտնվում են ուսումնասիրությունների փուլում:<br>- **միջազգային ագրոպարենային ցուցահանդեսներին ոլորտի տնտեսավարողներին իրազեկում**<br>***(կապարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Հայաստանի ագրոպարենային ոլորտում գործող տնտեսավարողներն իրազեկվել են հետևյալ միջոցառումների մասին՝<br>• 2018թ. փետրվարի 5-9-ը Մոսկվայում կայանալիք «Պրոդէքսպո 2018» սննդի, խմիչքների և դրանց արտադրության հումքի միջազգային ամենամյա ցուցահանդես,<br>• 2018թ. մարտի 19-20-ը Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում կայանալիք «Պրովայն 2018» ամենամյա միջազգային ցուցահանդես,<br>• 2018թ. ապրիլի 13-ից 15-ը Բուլղարիայի Վառնա քաղաքում կայանալիք «Wine and Food Festival – a story full of taste» խորագրով գինու և սննդի ավանդական ցուցահանդես-փառատոն,<br>• 2018թ. մայիսի 16-18-ը Չինաստանի Խընան նա- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | հանգի Լուոխը քաղաքում կայանալիք սննդի 16-րդ ցուցահանդես,<br>• 2018թ. մայիսի 24-26-ը Վիլնյուս քաղաքում կայանալիք «Agro Balt 2018» ցուցահանդես,<br>• 2018թ. մայիսին Թել Ավիվում կայանալիք «Ագրիտեք Իսրայել 2018» միջազգային ցուցահանդես,<br>• 2018 թվականի հունիսի 27-ից 29-ը Հոնկոնգում կայանալիք սննդի միջազգային ցուցահանդես,<br>• 2018թ. նոյեմբերի 5-ից 10-ը Չինաստանի Շանհայ քաղաքում կայանալիք «China International Import Expo 2018» բազմաճյուղ միջազգային ցուցահանդես,<br>• ԱՊՀ անդամ երկրներում 2018թ. ընթացքում կայանալիք ցուցահանդեսներ և այլն:<br>- **«Արմպրոդէքսպո-2018» միջազգային ցուցահանդեսի կազմակերպում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>«Արմպրոդէքսպո-2018» միջազգային ցուցահանդեսը նախատեսվում է անցկացնել 2018 թվականի հոկտեմբերի 19-ից 21-ը:<br>- **գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառների կազմակերպում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>Գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառները կվերսկսվեն 2018 թվականի հունիս-հուլիս ամիսնե- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | րին: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 29. | **Գինեգործության վարկանիշի և մրցունակության բարձրացում** | – **ՀՀ պետական բյուջե հավաքագրվող տարեկան մուտքերի պահպանմամբ՝ պետական տուրքի և ակցիզային հարկի դրույքաչափերի հաշվարկման մեթոդի վերանայման ուղղությամբ ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. մարտի 3-րդ փասնօրյակ)***<br>Պետական տուրքի և ակցիզային հարկի դրույքաչափերի և հաշվարկման մեթոդի վերանայման նպատակով կատարվել են լայնածավալ ուսումնասիրություններ 2011-2017թթ. թորած ալկոհոլային խմիչքների արտադրության իրականացման թույլտվության համար հավաքագրված պետական տուրքերի, իրացված արտադրանքից հավաքագրված ակցիզային հարկի գծով բյուջեի մուտքերի, դրանց փոփոխության դինամիկայի և ոլորտում առկա խնդիրների ուղղությամբ:<br>- **ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքներից ելնելով՝ առաջարկությունների ներկայացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հունիսի 3-րդ փասնօրյակ)***<br>Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքներից ելնելով առաջարկվել է՝<br>• կոնյակի ակցիզային հարկը հաշվարկել նվազա- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | գույն դրույքաչափերով,<br>• բարձրացնել շշալցված հայկական կոնյակների համար օրենսդրությամբ սահմանված իրացման նվազագույն գինը և դրանք սահմանել ըստ տարիքային խմբերի,<br>• ԱՏԳ ԱԱ 22082089 ծածկագրի՝ խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող կոնյակի և բրենդիի սպիրտների «Բաց թողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման արտադրական գործունեության իրավունքի համար սահմանել տարեկան 10 մլն դրամ և ներմուծված կամ իրացված յուրաքանչյուր լիտրի (100 տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ 100 դրամ պետական տուրք<br>• Ծանուցման ենթակա թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության գործունեության տեսակների շարքից առանձնացնել ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմերի արտադրությունը և ծանուցման ենթակա գործունեության տեսակների շարքը լրացնել ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող արտադրանքի արտադրություն և շշալցված արտադրանքի իրացում և ներմուծում տնտեսական գործունեությունները և դրանց իրականացման իրա- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | վունք ձեռք բերելու համար սահմանել տարեկան 10.0 մլն դրամ և 100 հազար լիտրից ավելի իրացված և ներմուծված շշալցված արտադրանքի յուրաքանչյուր լիտրի (100 տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար 25 դրամ լրացուցիչ տուրք:<br>Առաջարկվող փոփոխությունների արդյունքում, 2016թ. ցուցանիշներով հաշվարկված, կփոխհատուցվի ՀՀ պետական բյուջե հավաքագրվող տարեկան մուտքերի նվազումը և լրացուցիչ կհավաքագրվի շուրջ 205 մլն դրամ:<br>Վերը նշված առաջարկությունների հիման վրա մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 28-ի N ԻԱ/ԳՂ-1/10834-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի նիստում:<br>- **միջազգային ագրոպարենային ցուցահանդեսնե-** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | **րին գինեգործության բնագավառի տնտեսավարողնե-րին մասնակցության աջակցություն** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)*** - Հայաստանի խաղողագործության և գինեգործու-թյան հիմնադրամի աջակցությամբ ապահովվել է՝ 1. 2018 թվականի փետրվարի 5-9-ը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում միասնական հայկական տաղավարով գինեգործական 13 ընկերությունների մաս-նակցությունը «ProdExpo 2018» սննդի, խմիչքների և դրանց արտադրության հումքի միջազգային ամենամյա ցուցահանդեսին: 2. 2018 թվականի մարտի 18-20-ը Գերմանիայի Դաշնության Դյուսելդորֆ քաղաքում միասնական հայ-կական տաղավարով գինեգործական 16 ընկերություննե-րի մասնակցությունը «Prowein 2018» գինիների և ալկո-հոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահան-դեսին: Ցուցահանդեսներին ներկայացվել են գինիների ավելի քան 130 տեսականի: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 30. | **Ագրարային ոլորտում արտաքին ներդրում-ների ներգրավման գործընթացի ակտիվա-ցում** | - **երկկողմ և բազմակողմ համագործակցության արդյունքում ռեսուրսների ներգրավման ուղղու-թյամբ բանակցությունների անցկացում** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկ-տեմբերի 3-րդ փասնօրյակ)*** 2018 թվականի փետրվարի 22-25-ը կայացել է ՀՀ |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանի այցը Փարիզ: Ֆրանսիայի Հանրապետության պարենի և գյուղատնտեսության նախարար Ստեֆան Տրավերի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում հայ-ֆրանսիական համագործակցությանն առնչվող հարցերը, մասնավորապես 2014 թվականին ստորագրված հուշագրում ամրագրված բնագավառներում, ինչպես նաև գինու աշխարհագրական նշումներով գյուղատնտեսական ապրանքների համակարգի ներդրմանն ուղղված հնարավոր աջակցությանը, ֆրանսիական մասնագիտական ուսումնարանների՝ փորձարարական ֆերմաներով, Հայաստանում մասնաճյուղ բացելու հնարավորությանը, փոքր հողակտորներ ունեցող գյուղացիների համար նպաստավոր՝ բարձր եկամտաբերություն ունեցող գյուղատնտեսական կուլտուրաների մշակման հարցում (մասնավորապես, եթերային յուղերի ստացման համար մշակաբույսեր, արդյունաբերական կանեփ) ֆրանսիական կողմի աջակցությունը և դրանցում մասնագիտացած ֆրանսիական ընկերությունների ներգրավմանն առնչվող հարցեր: Քննարկվել են նաև ՀՀ-ԵՄ համաձայնագրի իրականացման վերաբերյալ, մասնավորապես՝ կոնյակի վերաբրենդավորման հարցերը: Զարգացման ֆրանսիական գործակալության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկվել են գործակալության կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը, ԵՄ դրա- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | մաշնորհով գործակալության կողմից իրականացվելիք «Irrigated Armenia» ծրագրի մանրամասները: Քննարկվել են նաև ֆրանսիական մասնավոր բիզնեսի կողմից Հայաստանում ներդրումների իրականացման հնարավորությունը, մասնավորապես անասնաբուծության և սառնարանային տնտեսությունների բնագավառներում: Առաջարկվեց նաև քննարկել ԵՄ կողմից 2019-2020թթ. ստացվելիք 15 մլն դրամաշնորհից որոշ միջոցներ ֆրանսիական ընկերություններին տրամադրելու հնարավորությունը, որոնք գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և ներդրումներ կկատարեն:<br>2018 թվականի փետրվարի 12-15-ը կայացել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի գլխավորած պատվիրակության այցն Ավստրիա: Հանդիպում է կայացել Ավստրիայի կայուն զարգացման նախարարության գլխավոր քարտուղար Յոզեֆ Պլանկի հետ, քննարկվել են Հայաստանի գյուղատնտեսական ծրագրերին ավստրիական կառավարության աջակցությանը վերաբերվող հարցեր: Այցի շրջանակներում կայացել է հանդիպում Ավստրիայի զարգացման գործակալության տնօրեն Մարտին Լեդոլթերի հետ, քննարկվել է Ավստրիայի կառավարության կողմից գործակալության միջոցով Հայաստանի գյուղատնտեսության մրցունակությունը բարձրացնող ավարտի հասցրած և դեռ ընթացքում գտնվող նախագծերի արդյունավետությունը, ինչպես նաև նոր ծրագրերի իրականացումը՝ ընդգրկելով նաև Ավստրիայի գյուղա- |

| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
|---|---|---|---|
| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | տնտեսական ոլորտում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կառույցների փորձի ուսումնասիրության, ինչպես նաև մասնագետների պատրաստման և գյուղատնտեսական կրթության հեռանկարները:<br>2018 թվականի մարտի 27-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Զարգացման ֆրանսիական գործակալության նախաձեռնությամբ կազմակերպվել է սեմինար՝ գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների հասանելիության բարելավման վերաբերյալ: 2018 թվականի մարտի 29-ին կայացել է գործակալության ներկայացուցիչների հանդիպումը ՀՀ գյուղատնտեսության նախարարի հետ, որի ընթացքում ներկայացվել են սեմինարի արդյունքները, ինչպես նաև հնարավոր առաջիկա ծրագրերը:<br>- **միջազգային կազմակերպությունների անդամակցության շրջանակներում ներդրումային ծրագրերի իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ տարվում են աշխատանքներ՝ դոնորական աջակցությամբ նոր տեխնիկական համագործակցության ծրագրերի իրականացման ուղղությամբ, մասնավորապես անասնակերի մատակարարման բարելավում և կաթնամթերքի վերամշակման ընդլայնում |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | Հայաստանի կաթնամթերքի ոլորտում ծրագիրը:<br>- **պետությունների հետ առևտրատնտեսական, գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում գյուղատնտեսությանն առնչվող հարցերի քննարկում** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Հաշվետու ժամանակաշրջանում կայացած հայ-լեհական, հայ-ռուսական և հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովների նիստերի ընթացքում քննարկվել են նաև ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունները:<br>- **միջազգային ագրոպարենային ցուցահանդեսներին գյուղատնտեսությունում տնտեսավարողների մասնակցությանն աջակցություն** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարը մասնակցել է 2018 թվականի հունվարի 17-21-ը Բեռլինում անցկացվող պարենի և գյուղատնտեսության գլոբալ ֆորումին և «Բեռլինյան կանաչ շաբաթ» ամենամյա միջազգային գյուղատնտեսական և սննդի արդյունաբերության հեղինակավոր ցուցահանդեսին:<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալը մասնակցել է 2018 թվականի փետրվարի 7-9-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին քաղաքում |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | կայացած «Մրգի լոգիստիկա Բեռլին 2018» թարմ մրգերի և բանջարեղենի համաշխարհային ամենամյա ցուցահանդեսին:<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աջակցությամբ հայկական գինեգործական 16 ընկերություններ միասնական տաղավարով ներկայացրել են իրենց արտադրանքը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում տեղի ունեցած գինու և ալկոհոլային ըմպելիքների՝ «Պրովայն Դյուսելդորֆ 2018» ամենամյա միջազգային ցուցահանդեսին: Ընկերությունների կողմից ներկայացվել են ավելի քան 130 տեսակի հանգիստ և փրփրուն գինիներ: Մի շարք ընկերություններ պարգևատրվել են ոսկե և արծաթե մեդալներով: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | 31. | **Սննդամթերքի անվտանգության համակարգի կատարելագործում** | - **սննդամթերքի անվտանգության բնագավառի գործող օրենսդրության մոտարկում ԵԱՏՄ օրենսդրությանը, առկա խնդիրների և օրենսդրական բացերի վերհանում և դրանց հիման վրա ՀՀ գործող օրենսդրության բարելավում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>2017 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարի N 228-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է ՀՀ-ում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | ներկայիս գործընթացի վերանայում, որը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հան-րապետությունում՝ անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման կարգը և դրանց պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» N 1335-Ն որոշմամբ և հա-մապատասխանեցում ԵԱՏՄ-ի կողմից շրջանառության մեջ դրված «ԵԱՏՄ-ի մաքսային տարածքում անաս-նաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանա-ռության կանոնակարգման» վերաբերյալ Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի նախագծով սահմանվող պահանջներին: Միջազգային չափորոշիչ-ներին համապատասխան՝ սննդամթերքի անվտանգու-թյան կատարելագործված համակարգի ստեղծման, սպառողներին անվտանգ և որակյալ սննդամթերքի ապահովման, ինչպես նաև արտաքին և ներքին շուկանե-րում տեղական արտադրության սննդամթերքի մրցու-նակության բարձրացման նպատակով մշակվել է «Հա-յաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականների սննդի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման հա-յեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը շրջանառվել է շահագրգիռ |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | գերատեսչություններով և ֆինանսատնտեսական կոմիտեի նիստի արդյունքների հիման վրա ներկայումս գտնվում է լրամշակման փուլում:<br>Ձեռք է բերվել պայմանավորվածություն «Ֆերմերից-ֆերմեր» ծրագրի տնօրենի հետ հրավիրել գյուղատնտեսության բնագավառի տարբեր ոլորտների միջազգային փորձագետներ, որոնք Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում սնունդ արտադրող ընկերություններում կիրականացնեն անվճար խորհրդատվություն:<br>Մասնակցություն է ցուցաբերվել Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցությունից բխող բաժնի գործառույթներին առնչվող բազմաթիվ տեսակոնֆերանսներին, որոնց ընթացքում քննարկվել և մասնագիտական դիրքորոշում է ներկայացվել ներկայումս շրջանառության մեջ գտնվող իրավական ակտերին:<br>**-սննդամթերքի անվտանգության ոլորտի կառուցվածքային բարեփոխումներ՝ այն կատարելագործելու ուղղությամբ**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (**«Հայաստանի խաղողագործության և գինեգործության** | 32. | **Խաղողի տնկարկների քարտեզագրման աշխատանքների իրականացում, «Խաղողի տնկարկների կադաստրի» հիմնում** | - **ծրագրի շրջանակներում «Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի» (GIS) տեխնոլոգիաների, դաշտային այցելությունների միջոցով հանրապետությունում առկա խաղողի տնկարկների քարտեզա-** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| **հիմնադրամ»)** | | | **գրում, ստացված բազայի հիման վրա «Խաղողի տնկարկների կադաստրի» հիմնման աշխատանքների առաջին փուլի իրականացում** ***(կատարման ժամկետը՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)*** Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից մշակվել է «Խաղողի տնկարկների կադաստրի համակարգի ստեղծման» նախագիծը և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի հետ համատեղ մշակման փուլում է գտնվում «Խաղողի տնկարկների կադաստրի» համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը՝ ծրագրի իրականացման մրցույթ հայտարարելու նպատակով: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտե-սության նախարա-րության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | 33. | **Սննդի շղթայի օպերատորների շրջանում ըստ ոլորտների որակի կառավարման համակարգերի ներդրման աշխատանքների իրականացում** | - **ըստ ոլորտների սննդի շղթայի օպերատորների իրազեկմանն ուղղված աշխատանքների իրա-կանացում** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ)*** 2018 թվականի մարտի 15-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պե-տական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) նախա-ձեռնությամբ՝ գործընկեր կառույցների հետ համատեղ նշվել է Սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, այդ նպատակով մարտի 7-15-ը իրականացվել են իրազեկման միջոցառումներ՝ նվիրված սպառողների իրավունքների պաշտպանության միջազ- |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | գային օրվան, որի շրջանակներում Ծառայության կողմից մարտի 13-ին իրականացվել են իրազեկման և քարոզչական աշխատանքներ՝ ուղղված վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) համակարգի վերաբերյալ սննդի շղթայի օպերատորների իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև վերջիններին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 827-Ն որոշմամբ հաստատված սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և ՎՎՀԿԿ համակարգի ներդրման ժամանակացույցը:<br>- **սննդի շղթայի օպերատորների հետ կենտրոնական և մարզային մակարդակներում հանդիպումներ, քննարկումներ, խորհրդատվություն ըստ իրենց գործունեության ուղղվածության և նախօրոք սահմանված գրաֆիկի**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հոկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>- **որակի կառավարման համակարգի աուդիտի իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հոկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>- **որակի կառավարման համակարգի աուդիտի գործըն-** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | **թացի գնահատում, բացերի և խնդիրների վերհանում** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ)*** ՎՎՀԿԿ համակարգի աուդիտի ստուգաթերթը փորձարկվել է «Արարատ» սննդի կոմբինատ» ՍՊԸ-ում: Ստուգաթերթի հաստատումից առաջ նախատեսվում է այն փորձարկել ևս մեկ տնտեսավարողի մոտ: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտե-սության նախարա-րության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | 34. | **Տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տրամադրում** | **- սանիտարական անձնագրերի տրամադրման փուլային անցում համաձայն ժամանակացույցի** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկ-տեմբերի 3-րդ տասնօրյակ)*** Աշխատանքներն ընթացքի մեջ են: **- միս և հաց տեղափոխող տրանսպորտային միջոցների համար սանիտարական անձնագրերի տրամադրման գործընթացի շարունակություն** ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկ-տեմբերի 3-րդ տասնօրյակ)*** 2018 թվականի հունվարից մինչև մարտի 23-ը սանի-տարական անձնագրեր են տրամադրվել 16 միս, 29 հաց և 2 կաթնամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցի: **- սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոց-ների սանիտարական անձնագրերի ապահովման նկատմամբ հետևողական հսկողության ապահովում և հսկողության գործընթացում թվայնացման աշխա-տանքների իրականացում** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | 35. | **Մսի իրացման և գնման ոլորտում պարտադիր սպանդանոցային մորթի ապահովում** | - **սպանդանոցային ծագման մսի իրացմանն ուղղված իրազեկման աշխատանքների իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հոկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Անասնաբուժական ուղեկցող ձև N 5 փաստաթղթի էլեկտրոնային եղանակով ստացման և ձև N 5-ի հավելվածները սպառողական շուկայում տրամադրելու նպատակով սպանդանոցային գործունեությամբ զբաղվող և թռչնի միս արտադրող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ Ծառայությունում կազմակերպվել են քննարկումներ և դասընթացներ՝ Ծառայությունում ներդրված կենդանական ծագման մթերքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերի տրամադրման թվայնացված նոր համակարգի կիրարկման և փորձարկման համար:<br>- **սպանդանոցային ծագման միս ձեռքբերողների և իրացնողների նկատմամբ պետական վերահսկողության իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)***<br>Ծառայություն են հրավիրվել պետական գնումներով ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր տեղեկացվել են, որ 2018 |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | թվականի մարտի մեկից պետական գնումներով թարմ մսի մատակարարումը պետք է իրականացվի բացառապես սպանդանոցներից: Միաժամանակ ներկայացվել է կենդանական ծագման մթերքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերի տրամադրման թվայնացված նոր համակարգը, ինչը հնարավորություն է տալիս արագ ու առանց լրացուցիչ ծախսերի կազմակերպել գործընթացը:<br>- **պարտադիր սպանդանոցային մորթի ժամանակացույցով սահմանված սպանդանոցային ծագման մսի իրացման նախապատրաստական աշխատանքների իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)***<br>Իրականացվել են այցելություններ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գործող սպանդանոցներ և թռչնի միս արտադրող կազմակերպություններ՝ էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման N 1 հավելվածի 4.1-ին կետով սահմանված ձև N 5 անասնաբուժական վկայականների տրման գործընթացը ուսումնասիրելու նպատակով:<br>- **անասնաբույժների աշխատանքի նկատմամբ հետևողական հսկողություն**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. նոյեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Հանրապետությունում մանր եղջերավոր կենդանիների |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | վաճառքով և մսի իրացմամբ զբաղվող անձանց գործունեությունը կանոնակարգելու և սպանդանոցային պարտադիր մորթի սկզբունքների կիրառման նպատակով Ծառայությունը գույքագրել է նշված գործունեությամբ զբաղվող իրացման կետերը: Կենտրոնական և մարզային մակարդակով իրականացվել են համապատասխան գործունեությամբ զբաղվող անձանց հետ քննարկումներ, բացատրվել են պահանջները, քննարկվել են բարձրացված հարցերը:<br>**- անասնաբուժասանիտարական փորձաքննության, մսի դրոշմման և անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի տրման գործընթացների նկատմամբ հետևողական վերահսկողության ապահովում և հսկողության գործընթացում թվայնացման աշխատանքների իրականացում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Ծառայության կողմից մշակվել են վերը նշված գործունեությանը ներկայացվող նվազագույն պահանջները, որոնք տեղեկատվական թերթիկների միջոցով տրամադրվել են շահառուներին: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի | 36. | **Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և նույնականացման ծրագրի մշակման աշխատանքների իրականացում** | **– կենդանիների համարակալման նույնականացման և գրանցման համակարգի մշակման համապարփակ նկարագրությանն ուղղված աշխատանքների (կախված միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների և երկրների ֆինանսավորումից) իրականացում** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| 1 | 2 | 3 | 4 |
| անվտանգության պետական ծառայություն) | | | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հունիսի 3-րդ փասնօրյակ)***<br>Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և նույնականացման ծրագրի ֆինանսավորման նպատակով միջազգային դոնոր կազմակերպությունների և երկրների հետ տարվում են շարունակական աշխատանքներ և իրականացվում քննարկումներ:<br>**- կենդանիների համարակալման նույնականացման և գրանցման համակարգի ներդրման ծրագրի ֆինանսավորման նպատակով միջազգային դոնոր կազմակերպությունների և երկրների հետ քննարկումներ**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հոկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Իրականացվում են շարունակական աշխատանքներ և քննարկումներ:<br>**– կենդանիների համարակալման նույնականացման և գրանցման ծրագրի իրականացման թվայնացված համակարգի ներդրման աշխատանքների շարունակում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարա- | 37. | **Ըստ արտադրատեսակների և գործունեության իրականացման տեսակների, սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման համակարգի ներդրման աշխատանքների** | **- սահմանային և տարածքային պետական վերահսկողության արդյունքներով ըստ արտադրատեսակների և արտադրողների ռիսկերի վերհանում և վերլուծություն** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| րության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | | **իրականացում** | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 1-ին փաստորյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>**- մսամթերք և կաթնամթերք արտադրողների ռեյտինգավորում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. նոյեմբերի 3-րդ փաստորյակ)***<br>Սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման մոդելի հիման վրա դասակարգվել են Հայաստանի Հանրապետությունում մսամթերք արտադրողները, աշխատանքներ են տարվում նաև կաթնամթերք արտադրողների ռեյտինգավորման ուղղությամբ:<br>**- մսի դասակարգում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հունիսի 3-րդ փաստորյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>**- տնտեսավարող սուբյեկտի գործունեության վերաբերյալ ստացված տեղեկատվության, պետական վերահսկողության արդյունքների հիման վրա Ծառայության կողմից սննդի շղթայի օպերատորների դասակարգում ըստ ոլորտային, ըստ սննդի շղթայի փուլերում իրականացվող գործունեության տեսակների և դրա հիման վրա դասակարգված տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ պետական վերահսկողության տարբերակված մոտեցումների կիրառում փուլային անցման սկզբունքով և դրանց արդյունքների հիման վրա հանրային** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | **իրազեկում** <br> ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)*** <br> Աշխատանքներն ընթացքի մեջ են: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 38. | **Սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման մոդելի մշակման և ռիսկերի կառավարման մեխանիզմների աշխատանքների իրականացում** | **– ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ ռիսկերի գնահատման կարողությունների զարգացման ծրագրի իրականացում,** <br> ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)*** <br> Աշխատանքներն ընթացքի մեջ են: <br> **– «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերակառուցում և տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում,** <br> ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)*** <br> Իրականացվում են ռիսկերի գնահատման մարմինների նշանակման, դրանց և ռիսկ կառավարող մարմինների փոխհարաբերությունները կանոնակարգող և ռիսկ գնահատող մարմիններ նշանակելու մասին իրավական ակտի մշակման աշխատանքներ: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարա- | 39. | **ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության լաբորատոր կարողությունների զարգացում** | **– «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջազգային ISO 17025 պահանջներին համապատասխան հավատարմագրում,** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| րության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | | | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. մարտի 3-րդ տասնօրյակ)***<br>Աշխատանքներ են տարվում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի 2018 թվականի գործունեության ուղղությունները, առաջնահերթությունները և աշխատանքները սահմանող ծրագրի մշակման ուղղությամբ:<br>**- մարզերում Ծառայության լաբորատոր կարողությունների զարգացում և փուլային անցում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>**- տեղական արտադրության ալկոհոլային խմիչքների Չինաստան արտահանման հնարավորություն ստեղծելու նպատակով ալկոհոլային խմիչքներում ֆտալատների հետազոտման չինական մեթոդների և ստանդարտների ձեռքբերում և ներդնում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>**- «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունների հավատարմագրման ոլորտների շրջանակների ընդլայնմանն ուղղված աշխատանքների իրականացում** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 1-ին փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | 40. | **Ներմուծման արտահանման ընթացակարգերի և այդ գործընթացներում ռիսկայնության մեթոդաբանության վերանայում և պարզեցում** | – **ներմուծման ռիսկայնության մեթոդաբանության սկզբունքների վերանայմանն ուղղված աշխատանքներ,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Ներմուծման ռիսկայնության մեթոդաբանության վերանայման նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը կներկայացվի շահագրգիռ մարմինների քննարկմանը:<br>– **ծառայության գործունեության էլեկտրոնային համակարգի գործարկում և սպասարկում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. հունիսի 3-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>– **ներմուծման ռիսկայնության մեթոդաբանության վերանայում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. մայիսի 3-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>– **ծառայության գործունեության էլեկտրոնային** |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը |
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | **համակարգի գործարկում և սպասարկում, խնդիրների և բացերի վերհանում և շտկում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | 41. | **Արտադրանքի և որակի կառավարման համակարգերի հսկողության բարձր մակարդակ ունեցող երկրներից որոշակի սննդամթերքի տեսակների ներմուծման դեպքում վարչարարության պարզեցում և ժամկետների կրճատում** | – **սահմանային վերահսկողության գործընթացներում նմուշառման կարողությունների զարգացում,**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. նոյեմբերի 3-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>– **բեռների մաքսային ձևակերպումների տարածքներում նմուշառման կարողությունների ստեղծմանն ուղղված աշխատանքներ**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)***<br>Աշխատանքներն ընթացքի մեջ են:<br>- **ռիսկայնության գնահատման արդյունքներով բարեխիղճ ներմուծող և արտահանող տնտեսվարողների նկատմամբ սահմանային վերահսկողության տարբերակված՝ պարզեցված վարչարարության կիրառում**<br>***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ)***<br>Ծառայության կողմից վերանայվում են ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն և N 1499-Ն որոշումները, որոնց նախագծերը կներկայացվեն շահագրգիռ մարմինների քննարկմանը: |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | Մշակվել է նաև ներմուծման գործընթացում սահմանային հսկողության կազմակերպման գործողությունների հսկման ընթացակարգ, որի իրավական և գործնական կիրարկման նպատակով տարվում են աշխատանքներ: |

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Միջոցառումների անվանումը** | **Միջոցառումների կատարման արդյունքը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 16. | «ՀՀ հողօգտագործողներին 2018 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ )*** Ընդունվել են ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման ծրագրի շրջանակներում սուբսիդիա և դրամաշնորհ տրամադրելու մասին» N 187-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի փետրվարի 8-ի «Պետական աջակցություն հողօգտագործող- |

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Միջոցառումների անվանումը** | **Միջոցառումների կատարման արդյունքը** |
| **1** | **2** | **3** | **4** |
| | | | ներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար ծրագիրը հաստատելու մասին» N 38-Ա հրամանը: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 17. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ***(կատարման ժամկետը սահմանված է՝ 2018թ. նոյեմբերի 3-րդ փասնօրյակ)*** Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությանը: Նախագիծը կներկայացվի շահագրգիռ մարմինների քննարկմանը: |